**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

29.04.2019թ.
ժամը 11$^{00}$

Մասնակցում էին՝
**Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ոսկանյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Համբարձումյանը,
ՀՀ ՊՆ ՊԱՀ համալսարանի գիտահրատարակչական կենտրոնի ռազմագիտական խմբագրման բաժնի պետ-գլխավոր խմբագրի տեղակալ, գնդապետ Հ. Ասատրյանը,
ՀՀ ՊՆ ՊԱՀ համալսարանի ԱՈՀԻ ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի գիտնական-վերլուծաբան Ա. Դավթյանը,
**գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ա.Սահակյան)

1. Տեղեկություններ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա.Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **գիտական հետազոտությունների մշակման ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն «Ի Դի Ար Սի» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա. Սահակյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Ա. Սահակյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Չ/Մ | Քա-նակը | Նախահաշ-վային գինը՝ ՀՀ դրամ | Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը | Մասնակիցների ընդհանուր գնային առաջարկը՝ ՀՀ դրամ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով |
| 1 | «Կլաուզևիցի, Ժոմինիի, և ռազմավարության ոլորտի մյուս դասականների տեսակետները ռազմական ռազմավարության սկզբունքների անփոփոխելիության վերաբերյալ» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 2 | «ԶՈւ ի կառուցվածքի կատարելագործում ժամանակակից մարտահրավերների հաշվառմամբ, այդ թվում՝ հատուկ օպերացիաների ուժերի ստեղծում ու զարգացում» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 3 | «Պետական և ռազմական կառավարման համակարգերի կատարելագործման ուղղությունները» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 4 | «Ազգային անվտանգությունը որպես համակարգ» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 5 | «Առաջադրանքային կառավարում» («Հրամանատարում առաջադրանքի միջոցով») հայեցակարգի էությունն ու բովանդակությունը, դրա արդիականությունը ԶՈՒ-ի համար | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 6 | «Ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխությունները, զինված պայքարի նոր միտումները» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 7 | «Ժամանակակից պայմաններում պատերազմի սանձազերծման հավանական եղանակները և դրանց կիրառման պայմանները: Հիբրիդային պատերազմների էությունը, վարման եղանակները, պայմանները. եզրակացություններ և դասեր ՀՀ-ի համար» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 8 | «Ռազմավարական զսպում. հիմնախնդիրներն ու լուծումները» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 9 | «Օպերատիվ արվեստի զարգացման միտումներն ու խնդիրները արդի փուլում» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 10 | «Կորպուսային պաշտպանողական օպերացիայի կազմակերպման, պաշտպանության անցման ու կազմակերպման, հակառակորդի կրակային խոցման պրոբլեմները արդի փուլում և դրանց լուծման ճանապարհները» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 11 | «Տարածքային պաշտպանություն. արդիականությունը և կազմակերպման պրոբլեմը» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 12 | «Զինված ուժերի հոգեբանական կայունության մակարդակի բարձրացման պրոբլեմները» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 13 | «Պարտականություններից ազատվելու անցման էությունն ու նախադրյալները» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 14 | «ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության համակարգի կատարելագործման որոշ հարցեր ժամանակակից սպառնալիքների հաշվառմամբ» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 15 | «Անհատական մարտական պատրաստման բարելավման անհրաժեշտության հիմնավորումը. դրա կատարելագործման հիմնական ուղղությունները ՀՀ Զինված ուժերի համար» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 16 | «Կառավարման կայունության բարձրացման ուղղությունները ռադիոէլեկտրոնային պայքարի և կրակային խոցման միջոցների զանգվածային կիրառման պայմաններում» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 17 | «Հետախուզության և խոցման ժամանակակից միջոցների ազդեցությունը օպերատիվ և մարտավարական քողարկման վրա: Օպերատիվ քողարկման և մարտավարական քողարկման հիմնական եղանակները» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 18 | «Օդաչուավոր մարտական ավիացիայի դերն ու նշանակությունը ԱԹԱ-ների դերի մեծացման պայմաններում» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |
| 19 | «Ծրագրային բյուջետավորում. հիմնական պրոբլեմները և դրանց լուծման եղանակները» | հատ | 1 | 117000 | Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն «Ի Դի Ար Սի» ՍՊԸ | 4,990,000 | 5,988,000 |
| 20 | «Տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության վերլուծություն» | հատ | 1 | 117000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են):

3.3 **06.05.2019**թ.-ին, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, սույն ընթացակարգի հրավերի 1 ին մասի 7.6 և 7.7 կետերի պահանջները, և քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 19-րդ չափաբաժնի համար հայտ էր ներկայացրել միայն մեկ մասնակից՝ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն «Ի Դի Ար Սի» ՍՊԸ ն, որի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում էր նշված չափաբաժնի գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և **10.05.2019**թ., ժամը 12:00-ին, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5), գների նվազեցման նպատակով վերոնշյալ մասնակցի հետ վարել միաժամանակյա բանակցություններ: Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային ծանով (**www.armeps.am** համակարգի միջոցով) ծանուցեց տվյալ մասնակցին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Նշված օրը և ժամին նախատեսված բանակցություններին ներկայացավ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն «Ի Դի Ար Սի» ՍՊԸ-ի տնօրենի կողմից լիազորված անձ՝ Մ. Թումասյանը, սակայն նա հրաժարվեց նվազեցնել ներկայացրած գնային առաջարկը և վերջինիս գնային առաջարկը մնաց անփոփոխ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.**

(Ա. Սահակյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 10.05.2019թ.-ին, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

4.1.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին)՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգը 19-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

4.1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգը 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18 և 20 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

4.1.3 Հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի չկայացման մասին հայտարարության տեքստը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Ա. Սահակյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող (ԳԱՊ)** | Գ. Ռիստյան |
| **Գնահատող** | Է. Համբարձումյան |
| **Գնահատող** | Զ. Ասատրյան |
| **Գնահատող** | Ա. Դավթյան |
| **Գնումները համակարգող** | Ա. Սահակյան |